ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

19.12.2018թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/177

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.11.2018թ. թիվ 27/26-3/21697-18 գրությամբ Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 20.11.2018թ. թիվ 01/800-18 գրության հիման վրա, 28.11.2018թ. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 20.11.2018թ. թիվ 01/800-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ որ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի վարչական շենքի համար վերելակի ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ն ներկայացրել է հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: «Մասնագիտական փորձառություն» փատտաթղթերում եղել է անհամապատասխանություն՝ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում գնման առարկային պահանջներին, որի արդյունքում՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի, մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր շտկումներ կատարելու համար: Սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերը ևս չեն համապատասխանել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշներին, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի 1-ին մասի պահանջներին, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերի շրջանակներում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչպես նաև ներկայացված պայմանագրերի շրջանակներում չեն իրականացվել Հրավերով պահանջվող նախագծային աշխատանքներ, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետին: Վերոնշյալ փաստերի արդյունքում Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի հայտը մերժվել է:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի լիազորված նեկայացուցիչ Տաթևիկ Հովհաննիսյանը:

3. <u>Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ն 10.12.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Երևան Ջերմակէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի վարչական շենքի համար վերելակի ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Նշված Ընթացակարգի հրավերի 2.5-րդ կետի համաձայն՝ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

Նույն հրավերին կից Հավելված 6-ով նախատեսվել է «Երևան Ջերմակէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագրի նախագիծը:

Նշված պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանվել է կապալային աշխատանքների կատարման տեխնիկական բնութագիրը:

Ըստ այդմ՝ սահմանվել է հետևյալը.

ՀՇԳՑԷ-ի վարչական շենքի մարդատար վերելակ՝

- Բեռնունակությունը, կգ - 320 մինչև 500 կգ,
- Արագությունը, մ/վ – 1,
- Հորան (լայնություն x խորություն), մմ- 1500 x 2200,

- Խցիկի տեսակը - ընտրում է նախագծողը,

- Դռների չափը, մմ - 1100 x 2000,

- Հորանի փոսի խորությունը, մմ- ոչ ավել 1000,

- Կանգառների քանակը- 4,

- Բարձրությունը, մ- 13,2,

- Հորանի դռների հրակայունությունը- EI 60,

Ամեն հարկում պետք է լինեն խցիկի ժամանելու մասին հաղորդող լուսանշային ինդիկատորներ:

Խցիկի հարդարում՝

- փակման զգայուն տվիչներ,

- վայրէջքի հրապարակում- կանչի կոճակը տեղադրել ամեն հարկում մետաղական կոնստրուկցիաների վրա խցիկից ձախ:

Տեխնոլոգիական առանձնահատկություններ՝

- Վերելակը մատակարարվում է հաճախականության փոխակերպիչով:
- Նախատեսել համակարգ հրդեհային հսկմամբ, խցիկի վերադարձ առաջին հարկ հրդեհի ժամանակ:
- Վերելակի էլեկտրական սնուցումը և վթարային լուսավորությունը պետք է նախատեսվեն I- ի կարգի էլեկտրասպարիչի համար:
- Անվտանգության համակարգ համաձայն գործող նորմերի:
- Պարտադիր լույսային և ձայնային ազդանշան խցիկում հետևյալ դեպքերում՝

1. Գերբեռնում,
2. Չարտոնված շարժում,
3. Չարտոնված կանգառ,
4. Շարժման արագության սահմանափակում,
5. Հարկերում կանգառի ժամանակ խցիկի դիրքավորման ճշտություն:

Դռների բացում՝

- Վերելակից նախատեսել ազդանշանի հաղորդում դեպի կենտրոնական կառավարման վահան վերելակի անվտանգության համակարգի շղթայի գործելու, հորանի

(шахта) դռների և վերելակի կառավարման պահարանի դռների չարտոնված բացման դեպքերում:

Վերելակը կահավորել հեռախոսակապով կենտրոնական կառավարման վահանի հետ արտակարգ կապի համար:

Մարդատար վերելակի հորանը և խցիկը նախատեսել թափանցիկ, ապակուց կամ այլ օրգանական նյութերից:

Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝Ա/Ձ) մասնակցել է «Երևան Ջերմակէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և իր առաջարկած 34.325.000 ՀՀ դրամ գնային առաջարկով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են մասնագիտական փորձառության որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը: Մասնավորապես, ներկայացվել են:

1. Դիլիջանի քաղաքապետարանի և Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի միջև 04.03.2015թ. կնքված Դիլիջան քաղաքի Շամախյան փողոցի 1ա հասցեի բազմաբնակարան շենքի վերելակի հիմնանորոգման ՀՀ-ՏՄԴՔ-ՊԸԱՇՁԲ-15/3 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագիրը (ընդհանուր գինը՝ 5.028.756 ՀՀ դրամ):

2. Դիլիջանի քաղաքապետարանի և Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի միջև 09.03.2015թ. կնքված Դիլիջան քաղաքւ Շամախյան փողոցի 1բ հասցեի բազմաբնակարան շենքի վերելակի հիմնանորոգման ՀՀ-ՏՄԴՔ-ՊԸԱՇՁԲ-15/4 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագիրը (ընդհանուր գինը՝ 5.101.956 ՀՀ դրամ):

3. Դիլիջանի քաղաքապետարանի և Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի միջև 13.03.2015թ. կնքված Դիլիջան քաղաքի Շամախյան փողոցի 2բ հասցեի բազմաբնակարան շենքի վերելակի հիմնանորոգման ՀՀ-ՏՄԴՔ-ՊԸԱՇՁԲ-15/5 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագիրը (ընդհանուր գինը՝ 7.315.246 ՀՀ դրամ):

4. Շվեյցարական Կարմիր Խաչի Հայաստանյան ներկայացուցչության և Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի միջև 20.04.2017թ. կնքված «Գյումրու տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի մասնաշենքի մարդատար վերելակի վերանորոգման աշխատանքների կատարման ծառայությունների պայմանագիրը (ընդհանուր գինը՝ 2.501.900 ՀՀ դրամ):

25.10.2018թ. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի էլ. հասցեին ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից ստացվել է նամակ-ծանուցում, որում մասնավորապես նշվել է՝ դուք ճանաչվել եք առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն մասնագիտական փորձառության հետ կապված փաստաթղթերում կա անհամապատասխանություն՝ մասնավորապես նմանատիպ գնման առարկայի հետ կապված: Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարված լինելը, հետևաբար հարկավոր է կցել նման պայմանագրի օրինակ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1։1 կետի համաձայն՝ «Երևան Ջերմակէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ն ներկայացրել է հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Մասնագիտական փորձառության հետ կապված փաստաթղթերում եղել է անհամապա-տասխանություն՝ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում գնման առարկայի պահանջներին, որի արդյունքում՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի, մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր շտկումներ կատարելու համար: Սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերը ևս չեն համապատասխանում հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշներին, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 67-րդ կետի 1-ին մասի պահանջներին, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերի շրջանակներում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչպես նաև՝ ներկայացված պայմանագրերի շրջանակներում չեն իրականացրել հրավերով պահանջվող նախագծային աշխատանքներ, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի

համանման գործարքների մասին 65-րդ կետին: Վերոնշյալ փաստերի արդյունքում մասնակցի հայտը մերժվել է:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական

չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 61-րդ կետի համաձայն, մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայություն-ների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում

կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա նույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջները չեն սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Նշված Ընթացակարգի Հրավերի 2.5-րդ կետի համաձայն՝ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարված լինելը:

Հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի և տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից ակնհայտ երևում է, որ պայմանագրով նախատեսվել են վերելակի տեղադրման հետ կապված կապալային աշխատանքների իրականացում:

Ա/Ձ-ի կողմից առաջին փուլով ներկայացվել են վերելակների վերանորոգման կապալային աշխատանքների իրականացման պայմանգրեր, որոնց շրջանակներում իրականացվել են Ընթացակարգի հրավերով սահմանված համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբի աշխատանքներ (տեղադրման, մոնտաժման, գործարկման և կարգաբերման և այլ աշխատանքներ):

Մինչդեռ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ խախտելով Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին պահանջները, ինչպես նաև Կարգի 61-րդ և 65-րդ կետերով սահմանված պահանջները՝ ներկայացված պայմանագրերը չի գնահատել հրավերի պահանջներին բավարարող, արձանագրել է, որ Հրավերով նմանատիպ են համարվում վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարված լինելը, հետևաբար հարկավոր է կցել հենց նման պայմանագրեր:

Գտնում ենք, որ Գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ գործողությունը իրավաչափ չէ, քանզի Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված պայմանագրերը Կարգի 65-րդ կետի ուժով պետք է համարվեին համանման, քանզի ակնհայտ է, որ դրանք վերաբերում են հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբին և առաջին փուլով ներկայացված պայմանագրերը պետք է համարվեին նմանատիպ, առավել ևս, որ Կարգի նույն 65-րդ կետի համաձայն՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը պետք է մեկնաբանվեր հօգուտ մասնակցի:

Այնուհետև, Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին տրվել է շտկում կատարելու հնարավորություն, ինչը Ա/Ձ-ի կողմից կատարվել է, և այս անգամ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ ներկայացված պայմանագրերում բացակայում են վերելակի նախագծման աշխատանքներ:

Այսպիսով, գտնում ենք, որ այս տեսանկյունից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պահանջը՝ ներկայացնելու համանման այլ պայմանագիր, քանի որ ներկայացված պայմանագրերը, ըստ հանձնաժողովի, չեն կարող դիտարկվել համանման, իրավաչափ չէ և հակասում է Կարգի 65-րդ կետի պահանջներին՝ վերոշարադրված հիմնավորվամբ:

Բացի այդ, պետք է փաստել, որ եթե անգամ ներկայացված պայմանագրերում, չեն կատարվել հրավերով նախատեսված բոլոր տեսակի աշխատանքները, ապա նույն Կարգի 65-րդ կետի համաձայն՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակների տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի, իսկ ներկայացված պայմանագրերը վերաբերում են տնտեսական գործունեության նույն խմբին (վերելակի վրա կատարվող աշխատանքներ են):

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-կողմից թույլ չի տրվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանզի գնահատող հանձնաժողովի պահանջը եղել է ոչ իրավաչափ և հակասել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, իսկ Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հապատասխանել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ անհասկանալի պատճառներով և կասկածելի հիմքերով մերժվել են ցածր գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերը, և հաղթող մասնակից է ճանաչվել ամենաթանկ գնային առաջարկ ներկայացրած «Մեգա Լիֆտ» ՍՊԸ-ն (նախահաշվային գնի՝ 50.000.000 ՀՀ դրամի պայմաններում 4-րդ տեղ զբաղեցրած մասնակից «Մեգա Լիֆտ» ՍՊԸ-ն առաջարկել է 49. 536.000 ՀՀ դրամ գնային առաջարկ):»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ն և Ա/Ձ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ Արթուր Պարանյանը և Հասմիկ Ենգոյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/177 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 28.11.2018թ. թիվ 27/26-3/21697-18 գրությունը, «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 20.11.2018թ. թիվ 01/800-18 գրությունը և կից փաստաթղթերը, ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 16.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 02.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի կողմից 10.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Պատվիրատուի կողմից 16.10.2018թ. և 25.10.2018թ. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին ուղված ծանուցումները, Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և «Ուկրշին» ԲԲԸ-ի միջև 02.10.2013թ. կնքված «Կամպիտալ շինարարության ենթակապալի» պայմանագիրը, Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և «Վիմպերգ» ՍՊԸ-ի միջև 01.08.2013թ կնքված թիվ 03-2013թ., Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և «Վիմպերգ» ՍՊԸ-ի միջև 01.08.2013թ կնքված թիվ 02-2013թ., Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և Դիլիջանի քաղաքապետարանի միջև 09.03.2015թ. կնքված թիվ ՀՀ-ՏՄԴՔ-ՊԸԱՇՁԲ-15/4, Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և Դիլիջանի քաղաքապետարանի միջև 12.03.2015թ. կնքված թիվ ՀՀ-ՏՄԴՔ-ՊԸԱՇՁԲ-15/5, և Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և Շվեյցարական կարմիր խաչի ներկայացուցչության միջև 20.04.2017թ. կնքված թիվ 01/17 պայմանագրերը, Ընկերության կողմից ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը.

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի վարչական շենքի համար վերելակի ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ն:

Ա/Ձ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ թիվ 3 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին

և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ա/Ձ-ի կողմից առաջարկված գնային առաջարկը 1-ին չափաբաժնի համար կազմել է՝ 34.325.000 ՀՀ դրամ:

- ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

- ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

- անվանումը՝ ՀՇԳՑԷ-ի վարչական շենքի մարդատար վերելակ.

- տեխնիկական բնութագիրը՝ բեռնունակությունը 320կգ. մինչև 500կգ., արագությունը 1մ/վ., հորան (լայնություն x խորություն) 1500մմ. x 2200մմ., խցիկի տեսակը ընտրում է նախագծողը, դռների չափը 1100մմ. x 2000մմ., հորանի փոսի խորությունը 1000մմ. ոչ ավել, կանգառների քանակը 4, բարձրությունը 13,2մ., հորանի դռների հրակայունությունը EI 60, ամեն հարկում պետք է լինեն խցիկի ժամանելու մասին հաղորդող լուսանշային ինդիկատորներ խցիկի հարդարում՝ փակման զգայուն տվիչներ, վայրէջքի հրապարակում, կանչի կոճակը տեղադրել ամեն հարկում մետաղական կոնստրուկցիաների վրա խցիկից ձախ:

- տեխնոլոգիական առանձնահատկություններ՝ վերելակը մատակարարվում է հաճախականության փոխակերպիչով, նախատեսել համակարգ հրդեհային հսկմամբ, խցիկի վերադարձ առաջին հարկ հրդեհի ժամանակ, վերելակի էլեկտրական սնուցումը և վթարային լուսավորությունը պետք է նախատեսվեն I-ի կարգի էլեկտրասպարիչի համար, անվտանգության համակարգ համաձայն գործող նորմերի պարտադիր լույսային և ձայնային ազդանշան խցիկում հետևյալ դեպքերում՝ գերբեռնում, չարտոնված շարժում, չարտոնված կանգառ, շարժման արագության սահմանափակում, հարկերում կանգառի

ժամանակ խցիկի դիրքավորման ճշտություն, դռների բացում, վերելակից նախատեսել ազդանշանի հաղորդում դեպի կենտրոնական կառավարման վահան վերելակի անվտանգության համակարգի շղթայի գործելու, հորանի (шахта) դռների և վերելակի կառավարման պահարանի դռների չարտոնված բացման դեպքերում: Վերելակը կահավորել հեռախոսակապով կենտրոնական կառավարման վահանի հետ արտակարգ կապի համար, մարդատար վերելակի հորանը և խցիկը նախատեսել թափանցիկ, ապակուց կամ այլ օրգանական նյութերից.

- ընդհանուր քանակը/չափման միավորը՝ մեկ հատ.

- կատարման ժամկետը՝ 120 օր (օրացույցային) պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի կողմից որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող փաստաթղթեր ներկայացվել են հետևյալ պայմանագրերը՝

1. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և «Ուկրշին» ԲԲԸ-ի միջև 02.10.2013թ. կնքված «Կամպիտալ շինարարության ենթակապալի» պայմանագիր.

- Գնման առարկա՝ «Ալավերդի քաղաքի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային մասնաշենքում շինարարական աշխատանքներում նախատեսված վերելակի մոնտաժման աշխատանքներ:

- Աշխատանքի արժեքը՝ 7.800.000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և «Վիմպերգ» ՍՊԸ-ի միջև 01.08.2013թ կնքված թիվ 03-2013թ. պայմանագիր.

- Գնման առարկա՝ թվով 2 (երկու) վերելակների մոնտաժման աշխատանքներ:

- Աշխատանքի արժեքը՝ 2.900.000 (երկու միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և «Վիմպերգ» ՍՊԸ-ի միջև 01.08.2013թ կնքված թիվ 02-2013թ. պայմանագիր.

- Գնման առարկա՝ թվով 2 (երկու) վերելակների հորանների մոնտաժման աշխատանքներ:

- Աշխատանքի արժեքը՝ 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

4. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և Դիլիջանի քաղաքապետարանի միջև 09.03.2015թ. կնքված թիվ ՀՀ-ՏՄԴՔ-ՊԸԱՇՁԲ-15/4 պայմանագիր.

- Գնման առարկա՝ Դիլիջան քաղաքի Շամախյան փողոցի 1բ հասցեի բազմաբնակարան շենքի վերելակի հիմնանորոգման աշխատանքներ:

- Աշխատանքի արժեքը՝ 5.101.956 (հինգ միլիոն մեկ հարյուր մեկ հազար ինը հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:

5. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և Դիլիջանի քաղաքապետարանի միջև 12.03.2015թ. կնքված թիվ ՀՀ-ՏՄԴՔ-ՊԸԱՇՁԲ-15/5 պայմանագիր.

- Գնման առարկա՝ Դիլիջան քաղաքի Շամախյան փողոցի 2բ հասցեի բազմաբնակարան շենքի վերելակի հիմնանորոգման աշխատանքներ:

- Աշխատանքի արժեքը՝ 7.315.246 (յոթ միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ:

6. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի և Շվեյցարական կարմիր խաչի ներկայացուցչության միջև 20.04.2017թ. կնքված թիվ 01/17 պայմանագիր.

- Գնման առարկա՝ «Գյումրու տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի մասնաշենքի մարդատար վերելակի վերանորոգման աշխատանքներ:

- Աշխատանքի արժեքը՝ 2.501.900 (երկու միլիոն հինգ հարյուր մեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 16.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 5.1 կետով որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին:
- 5.2 կետով որոշել է Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ից պահանջել է ներկայացնել Հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 16.10.2018թ. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի վարչական շենքի համար վերելակի ձեռքբերման,

մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում Դուք ճանաչվել եք առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Ուստի առաջարկում ենք սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում tatevik.hovhannisyan@osllc.am էլ. փաստի հասցեին ուղարկել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը պայմանագիր կնքելու նպատակով, կամ հայտնել Ձեր կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները:»:

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 20.10.2018թ. Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի վարչական շենքի համար վերելակի ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում Դուք ճանաչվել եք առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Սակայն «Մասնագիտական փորձառություն» փատտաթղթերում առկա է անհամապատասխանություն՝ մասնավորապես նմանատիպ գնման առարկայի հետ կապված: Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարված լինելը, հետևաբար հարկավոր է կցել նման պայմանագրի օրինակ: Առաջարկում ենք սահմանված կարգով մինչ աշխատանքային օրվա ավարտը շտկել անհամապատասխանությունը և նշված փաստաթղթերը ուղարկել tatevik.hovhannisyan@osllc.am էլ. փաստի հասցեին:»:

Հանձնաժողովը 02.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է Հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: «Մասնագիտական փորձառություն» փաստաթղթերում եղել է անհամապատասխանություն՝ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում գնման առարկային պահանջներին, որի արդյունքում՝ համաձայն ՀՀ կառավարության

04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի, մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր շտկումներ կատարելու համար: Սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերը ևս չեն համապատասխանել Հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշներին, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի 1-ին մասի պահանջներին, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերի շրջանակներում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի 50 տոկոսից, ինչպես նաև ներկայացված պայմանագրերի շրջանակներում չեն իրականացվել Հրավերով պահանջվող նախագծային աշխատանքներ, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետին: Վերոնշյալ փաստերի արդյունքում Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի հայտը մերժվել է:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ա/Ձ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի կողմից ներկայացվել են վերելակների վերանորոգման կապալային աշխատանքների իրականացման պայմանգրեր, որոնց շրջանակներում իրականացվել են Ընթացակարգի հրավերով սահմանված համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբի աշխատանքներ, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ներկայացված պայմանագրերը գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան: Ա/Ձ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ գտնում է, որ Հանձնաժողովի վերոհիշյալ գործողությունը իրավաչափ չէ, քանի որ Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված պայմանագրերը վերաբերում են հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբին և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի ուժով պետք է համարվեին նմանատիպ: Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին տրվել է շտկում կատարելու հնարավորություն, ինչը Ա/Ձ-ի կողմից կատարվել է, սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերը Պատվիրաուն կրկին գնահատել է հրավերով սահմանված

որակավորման չափանիշներին անհամապատասխան, արձանագրելով որ ներկայացված նմանատիպ պայմանագրերի շրջանակներում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Ա/Ձ-ի կողմից առաջին փուլով ներկայացված պայմանագրերի գումարային ծավալը ներկայացված գնային առաջարկի հիսուն տոկոսից պակաս չի եղել:

Բողոքներ քննող անձի այն հարցին, որ Հրավերով վերելակի նախագծման աշխատանքների համար լիցենզիայի պահանջ եղել է, թե ոչ, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ տվյալ ընթացակարգի շրջանակներում որևէ լիցենզիայի պահանջ չի եղել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի,

ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին.

- 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները.
- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը.

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին.

• 61-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման

արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

- 65-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի վարչական շենքի համար վերելակի ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված

աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

• 17.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

• 17.19 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

• 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ

զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով.
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները.

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Հանձնաժողովը Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ից պահանջել է ներկայացնել Հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

- Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

- Հանձնաժողովը արձանագրել է, որ ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին, այնուհետև Ա/Ձ-ին շտկման հնարավորություն է տվել:

- Հանձնաժողովը արձանագրել է, որ Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը ևս չեն համապատասխանել Հրավերով սահմանված պահանջներին:

- Հանձնաժողովը արձանագրել է, որ Ա/Ձ-ի ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա են հետևալ անհամապատասխանությունները՝ ներկայացված «Մասնագիտական փորձառություն» փաստաթղթերը չեն համապատասխանում գնման առարկային պահանջներին, մասնակցի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրերի շրջանակներում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչպես նաև ներկայացված պայմանագրերի շրջանակներում չեն իրականացվել Հրավերով պահանջվող նախագծային աշխատանքներ:

- Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի կողմից առաջարկված գնային առաջարկը կազմել է՝ 34.325.000 ՀՀ դրամ:

- Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ն ներկայացրել է նախկինում կատարած նմանատիպ 6 պայմանագիր, որոնց շրջանակներում կատարված աշխատանքների ընդհանուր ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է 26.319.102 ՀՀ դրամ, որը գերազանցում է Ա/Ձ-ի կողմից առաջարկված գնային առաջարկի հիսուն տոկոսը:

- ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

- ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում որևէ նախագծման աշխատանք ներառված չէ:

- ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով՝ նախագծման աշխատանքների համար նախատեսված լիցենզիայի պահանջ սահմանված չի եղել:

- Հանձնաժողովի կողմից հայտնաբերված անհամապատասխանությունները նիստի արձանագրության մեջ մանրամասն չեն նկարագրվեն:

- Հանձնաժողովի կողմից Կարգի 47-րդ կետով սահմանված ժամկետը չի տրամադրվել Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար:

Այսպիսով, հաշվի առնելով այն, որ ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը նախագծման աշխատանքներ չի ներառում, իսկ ներկայացված պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքներն ակնհայտ նմանատիպ են Հրավերով նախատեսված գնման ենթակա առարկային, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ի կողմից ներկացված նախկինում կատարած պայմանագրերը նմանատիպ չլինելու հիմնավորմամբ Հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելը և Ընկերության հայտը մերժելն՝ անհիմն է:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովն արձանագրված անհամապատասխանությունները հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն չնկարագրելով և Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին արձանագրված

անհամապատասխանությունները շտկելու համար Կարգի 47-րդ կետով սահմանված ժամկետը չտրամադրելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.11.2018թ. թիվ 27/26-3/21697-18 գրությամբ Արմեն Սարիբեկյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ